

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում մասնավոր հոգեհանգստյան պաշտոն՝ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանի մահվան առթիվ:

Այս մասին տես Վեհափառ Հայրապետի դամբանական քարոզը և հանգուցյալ Ս. Գասպարյանի կյանքին և գործունեությանը նվիրված հաղորդագրությունը «Էջմիածին» ամսագրի 1977 թ. օգոստոս ամսի համարում (էջ 21—24):

*
* *

Սեպտեմբերի 11-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր, տարվա վերջին և մեծ տաղավարի առիթով, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և քարոզում՝ «Սուրբ Խաչն օգնական հաստատելոց, կանգնեցաւ ի յերկրի յաղթող ընդդէմ թշնամւոյն, եկայք ժողովուրդք երկրպագեսցուք» շարականի բնաբանով:

Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող երկու խումբ ուխտավորներ՝ Ֆրանսիայից և Ամերիկայից, երկյուղածությամբ ներկա եղան արարողությանը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է «Թափոր Խաչվերացի» Մայր տաճարի շուրջ եռադարձ հանդիսավորությամբ: «Ի թափօր մի՛ եւս ելցեն մինչեւ ի Տեառնընդառաջն եւ ասասի ի Ծաղկազարդն»:

*
* *

Սեպտեմբերի 12-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: Հավարտ ս. պատարագի «կատարի հոգեհանգիստ վասն հանգուցելոց. յիշատակ մեռելոց»:

*
* *

Սեպտեմբերի 15-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի դահլիճում ուսումնական տարվա առաջին բանախոսությունն է տեղի ունենում: «Մխիթար Սեբաստացու

ծննդյան 300-ամյակը» թեմայով բանախոսում է հոգևոր ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Պարգև Շահբազյանը: Սույն բանախոսությունը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 70):

Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը ու մայրավանքի պաշտոնեությունը:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, երեկոյան ժամը 18.30-ին, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ է ժամանում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը՝ ընկերակցությամբ Ավստրալիայի ծանոթ ազգային-հասարակական գործիչ և Մայր Աթոռի բարերար տեր և տիկին Հարություն Ակինյանի:

Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհափառ Հայրապետն ընդունում է ուխտավորներին և զրույց ունենում նրանց հետ՝ թեմի ազգային-եկեղեցական կյանքի մասին:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Ցաւել ի մեզ Տէր ամենակալ, զնաւատ, զյոյս և զսէր և զամենայն գործս առաքինութեան» աղոթքի բնաբանով:

Վեհափառ Հայրապետը ողջունում է ս. Էջմիածնում ուխտավորաբար գտնվող Ստամբուլից, Ամերիկայից, Ավստրալիայից և Բեյրութից բազում ուխտավորների, ինչպես նաև ազգային բարերարներ տեր և տիկին Հարություն Ակինյանին (Ավստրալիա), տեր և տիկին Ջոն Գաբրիելյանին (Կալիֆորնիա): Հավարտ ս. պատարագի Մայր տաճարում կատարվում է հոգեհանգստյան պաշտոն, Վեհափառ Հոր նախագահությամբ, տեր և տիկին Հարություն Ակինյանի ու տեր և տիկին Ջոն Գաբրիելյանի ննջեցյալների հիշատակին:

*
* *

Նույն օրը, ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է ուխտավորներին, հետաքրքրվում նրանց կյանքով և օրհնում բոլորին:

Այս առթիվ Լիբանանահայ Օգնության Խաչի «Շուշանիկ» մասնաճյուղի անունից ատենապետ Եղիսաբեթ Գազանճյանը, հանուն Լիբանանահայ Օգնության Խաչի, ընթերցում է հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր,

Լիբանանի Օգնության Խաչի Նոր Ադանա «Շուշանիկ» մասնաճյուղի վարչությունը, այսու կուգա իր Ամենայն Հայոց կաթողիկոսին փոխանցելու, Պուրճ-Համուտի՝ Ատանա, Նոր Ատանա, Յոզղատ, Իսմարզա, Նոր Կիլիկիա թաղեր.—և քաղաքապետական շենքեր.—հայության երախտագիտական որդիական զգացումները Ձեր հայրական վերաբերումին համար, երբ Դուք մեր ամենեն ողբերգական օրերուն օգնության հասաք:

Վեհափառ Տե՛ր,

Ինչքան դժբախտ օրեր էին, և սակայն, տոկացինք, ապրեցանք և մխիթարվեցանք, արտաքին օժանդակություններու, հայրական և հայու գուրգուրանքին հետ, զոր կհասներ ս. Էջմիածնեն, հայրենիքեն, օտար ափերեն, հեռու տեղերեն:

Օգնության Խաչի Նոր Ատանա «Շուշանիկ» մասնաճյուղի վարչության և Օգնության Խաչի գոյության նպատակը, օտար ափերու վրա, հայ չքավոր սաներու կրթաթոշակին նպաստելն է: Ինչպես նաև, ուսո՛ւմ, հայ լեզու ուսուցանել հայ տղուն: Հայ տղան՝ հայ դպրոց ղրկել: Կպատահի որ չքավոր փոքրերուն, իրենց տունեն մենք առաջնորդենք դպրոց: Մեզի համար նվիրական պարտականություն է ս. Մեսրոպին, հայ լեզվին, հայ եկեղեցիին, հայրենիքին ծառայել: Նաև, մեր նպատակն է՝ չքավոր հիվանդներուն դեղ ու դարման տանիլ: Մերթ, նյութական ձեռնարկներուն շարքին, հայապահպանման, հայկական ավանդություններու գծով հանդիպումներ և դասախոսություններ ալ կունենանք:

Վեհափառ Տե՛ր,

Կփակենք մեր սույն նամակը, մաղթելով մեր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին արևշատություն և հայ եկեղեցվո հավերժություն:

Այս առթիվ՝

Շատ հարգելի և սիրելի Վեհափառ Տեր, ընդունեցեք մեր Օգնության Խաչի «Շուշանիկ» մասնաճյուղի անունով այս գեղեցիկ ոսկե խաչը, որպես հուշանվեր մեր այս հանդիպումին և երախտագիտությունը սփյուռքահայ Ձեր զավակներուն:

Մնամք որդիական սիրով և հարգանքով
Լիբանանայ Օգնության Խաչի

Ա.դպիր **Ա.պետ**

Սրբուհի Ս.գնավուրյան **Եղիսաբեթ Գազանճյան»**

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ տեր և տիկին Հարություն Ակինյանի և տեր և տիկին Ջոն Գաբրիելյանի, տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է հանդիսավոր իրադրության մեջ Ջոն Գաբրիելյանի կուրծքը զարդարել ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով՝ նրա ազգային-հասարակական գործունեության և բարերարությունների համար:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Լոնդոնից տ. Պսակ արքեպ. Թումայանը:

*
* *

Սեպտեմբերի 23-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում ԱՄՆ-ի արևելյան թեմի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

Նույն օրը, ավելի ուշ, Մայր Աթոռ է ժամանում նաև Բեյրութից տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը:

*
* *

Սեպտեմբերի 25-ին, կիրակի.—Տօն է Վարագայ սրբոյ Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը ու քարոզում՝ «Հրեայք նշան հայցեն, և հեթանոսք իմաստութիւն խնդրեն, մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս՝ հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն» (Ա Կորնթ. Ա 22) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էին բազմաթիվ փառ Հայրապետը:

Ս. Պատարագին ներկա էին բազմաթիվ ուխտավորներ տարբեր երկրներից:

*
* *

Սեպտեմբերի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Մայր Աթոռ է ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևմտյան թեմի հայոց առաջնորդ տ. Վահե արքեպ. Հովսեփյանը:

*
* *

Սեպտեմբերի 27-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը:

Նույն օրը, ավելի ուշ, դարձյալ Մայր Աթոռ են ժամանում Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Երուսաղեմի հայոց պատրիարքության դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի տեսուչ տ. Շահե արքեպ. Անեմյանը:

*
* *

Սեպտեմբերի 27-ին Լենինգրադում գումարվում է Սովետական Միության խաղաղության պաշտպանության կոմիտեի հոբելյանական նիստը՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյակին:

Ժողովը բացվում է Լենինգրադի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Լ. Ն. Զայկովի ողջույնի խոսքով:

Հոբելյանական սույն նիստը ողջունում է խաղաղության պաշտպանության համաշխարհային կոմիտեի նախագահ դոկտոր Ռոմեշ Չանդրան:

Այնուհետև հանդես է գալիս Սովետական Միության խաղաղության պաշտպանության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ ակադեմիկոս Ե. Կ. Ֆեոդորովը, որը զեկուցում է կոմիտեի կատարած խաղաղասիրական գործունեության մասին:

Նիստի ավարտին, կարծիքների փոխանակությունից հետո, ընդունվում է, հանուն ժողովի, աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերին ուղղված մի դիմում՝ իրենց ձայնը բարձրացնելու զինաթափման օգտին և ընդդեմ նեյտրոնային ռումբի արտադրության և օգտագործման:

Այլ պատգամավորների շարքում, հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի, այդ նիստին մասնակցում էր նաև Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը:

*
* *

Սեպտեմբերի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18.30-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի լիակատար նիստը:

*
* *

Հոկտեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ են առնում և մեկնում իրենց թեմերը ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը և ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը:

*
* *

Հոկտեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը ընդունում է Վեհարանում այցելությունը Ռումինիայի մի խումբ գիտնականների՝ գլխավորությամբ դոկտ. Ֆլորին Թնեքսուի և պրոֆ. Յոհան Ուրսուի:

*
* *

Հոկտեմբերի 7-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը ընդունում է Վեհարանում այցելությունը Իտալիայում Մալթայի ասպետական կարգի դեսպան և լիազոր, մինիստր Հովհաննես Ծվայցենբերգի: Վեհափառ Հայրապետի և հարգարժան դեսպան-դիվանագետի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին որպես անդամ մասնակցում է նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերոբե արքեպիսկոպոս Մանուկյանը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստին Վեհափառ Հայրապետի հրավերով մասնակցում էր նաև հոգևոր խորհրդի նոր անդամ պրոֆ. Կարպիս Կարագյանը՝ փոխարինելով հանգուցյալ պրոֆ. Արարատ Ղարիբյանին:

Ժողովի ժամանակ Վեհափառ Հայրապետը ողջունում է ներկայությունը պրոֆ. Կ. Կարագյանի՝ մաղթելով նրան բեղուն գործունեություն, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

Պրոֆ. Կ. Կարագյանը Հայոց Հայրապետին հայտնում է իր շնորհակալությունը Գերագույն հոգևոր խորհրդին անդամակցելու հրավերի և իր անձի նկատմամբ ունեցած վստահության համար:

Պրոֆեսոր Կ. Կարագյանը ծնվել է Պարտիզակում, Կ. Պոլսի մոտ: Ավարտել է Կ. Պոլսի կենտրոնական վարժարանը և 1927 թ. ներգաղթել Հայաստան ու սովորել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում, ուր և հաջորդ տարիներին պաշտոնավարել է որպես պրոֆեսոր: Կ. Կարագյանը միաժամանակ ունի նաև վաստակավոր տնտեսագետի կոչում:

*
* *

Հոկտեմբերի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած Արևմտյան Գերմանիայի Քյոլնի հայոց հոգևոր հովիվ տ. Գարեգին աբեղա Ներսիսյանը ու քարոզում՝ «Զի ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ» (Ղուկ. ԺԲ 23) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է շուրջ 40 հոգուց բաղկացած ստամբուլահայ ուխտավորների:

Նորին Սրբությունը հայրական սիրով զրույց է ունենում նրանց հետ և հետաքրքրվում՝ ստամբուլահայ Իր հոգևոր զավակների եկեղեցական-մշակութային կյանքով:

Ուխտավորներից ոմանք ջերմ ուղերձներով շնորհավորում են Հայոց Հայրապետի գահակալության 22-րդ տարեդարձը և արտագին բարեմաղթություններով ցանկանում Մայր Աթոռին անսասանություն, հայոց եկեղեցուն՝ պայծառություն, և Հայոց Հայրապետին՝ երկար ու երջանիկ գահակալություն:

Ուխտավորներից Գոհարիկ Տիրատուրյանն իր խոսքի մեջ ասում է.

«Վեհափառ Տեր,

Ամիսներե ի վեր այսօր իրականացուցինք մեր երազը: Ինչ մեծ խնդություն մեզի համար, մեր երազներուն իրականությունը կապրինք հիմա, Ձեր բարձր և սուրբ հովանիին տակ բոլորված:

Տկար գրիչովս կուզեմ թարգմանը հանդիսանալ ընկերներուս զգացումներուն, որոնք իրենց հետ միասին կբերեն նաև ամ-

բողջ համայնքի մը, իսթամպուլահայության սիրտը:

Ջեղուն են մեր սրտերը զգացումներուն ամենեն գեղեցիկովը և վսեմով. հայրենիքի սերն է ան որ կենայտնաբերվի սրտառուչ պատկերացումով:

Վեհափառ Տեր, երջանիկ ենք մենք այսօր, որովհետև նույնացած ենք մեր հարազատներուն, պապերուն, մամերուն, բույրերուն, եղբայրներուն և զավակներուն հետ: Նույն մաքուր օդը շնչելու, նույն արևը վայելելու, նույն զուլալ ջուրը ըմպելու բաղդը իրականությունը ունինք մեր հոգիներուն մեջ:

Հայրենիքեն հեռու, մենք ալ կերգենք «Կոմիտաս», կկարդանք, կարտասանենք Թումանյան, Իսահակյան, Սևակ և այլն: Բայց հոս՝ մայր հայրենիքի երկնքին տակ, անոնք ավելի հարազատ և անսեթևեթ կըհնչեն:

Շուտով և մեծ ցավով պիտի բաժնվինք մեր անուշ հայրենիքեն և Մայր Աթոռեն, բայց վստահ եղեք, Վեհափառ Տեր, որ մղոններու հեռավորությունը անիմաստ է մեզի համար: Հոգ չէ թե երազանքով, բայց միաձույլ պիտի ապրինք բոլորիդ հետ, Ձեր վեհ շուքին տակ:

Արևշատություն, առողջ և երկար կյանք կմաղթենք Ձեզի, Վեհափառ Տեր: Ձեր բարձր հովանին, որ կենսատու արևն է հայ ազգին, անպակաս ըլլա մեր բոլորին վրայեն»:

Իր սրտի խոսքն է ասում նաև Թոկո Ա-ճենյանը.

«Շատ հատկանշական են այն պահերը, ուր մարդ հուզումը, ուրախությունը, երջանկությունը և խոսքը մեկտեղված կզգա:

Անձի մը կյանքի գեղագույն ապրումի նվիրական պահերն են ասոնք: Առաջին առթիվ երբ 1961 թվականին երջանկահիշատակ Գարեգին պատրիարքի վախճանման առթիվ Իսթանպուլի մեջ դուք առաքելաշնորհ Հայրը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, փառքի լուսավոր պատվանդանի մը վրա կանգնած՝ որպես լուսավորչյան աստղ ծագեցաք: Ի բոլոր սրտե կմաղթենք և միահամուռ կփափաքինք որ մեր պանծալի Հայրապետը՝ Նորին Սուրբ Օծությունը դարձյալ Իր բարձր ներկայությամբ Իսթանպուլի մեջ համազգային մեծարանքի ու հիրասիրության առիթ ընծայե մեզի:

Սա պահուս մեր խանդավառությունը, ուրախությունը ու նաև խայտանքը բառապատկված են ի տես այն հսկայական աշխատանքներուն, որով Ձեր մականին տակ, Ձեր իմաստուն վարչագիտությամբ և շինարարությամբ վերազարթոնքի նոր դարաշրջան մը բացվեցավ: Մեր հրճվանքը անձայրածիր է. մեր տարիներու երազը իրականացավ այսօր, անձամբ գալ տեսնել սուրբ Էջմիածնա և շրջակայքի հսկա շինությունները, հնությունները, վիթխարի աշխատանքը: Մեր անխառն հուզումը և հրապարտանքը անզոր կմնան և մեր գրիչը սակար՝ այդ վերելքը ու խոյանքները լավագույնս տարփողելու համար:

Հանուն մեր ընկերակից բարեկամներուն, կմաղթեմ որ Տերը անսասան պահե Էջմիածնա սուրբ Գահը, անոր արժանընտիր Գահակալը՝ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը և Իր լծակից բոլոր միաբանները, որոնց ազգօգուտ գործունեությունը սփյուռքի բոլոր անկյունները կտարածվին և իր օրհնաձիր անդրադարձը կունենան բովանդակ հայ հավաքականության վրա»:

Հայոց Հայրապետին ստամբուլահայ ուխտավորների կողմից ողջունում է նաև տիկին Աստղիկ Քեհյայանը.

«Հոգեկան մեծ հրճվանք մը և անհուն երջանկություն մը կպարուրե ամբողջ էությունս, քանի որ դարձյալ կգտնվիմ մեր մայր հայրենիքին և Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ:

Ս. Էջմիածնա Մայր տաճարը իր մասնավոր տեղը ունի հայ սրտերուն մեջ: Անոր յուրաքանչյուր քարը իր ուրույն պատմությունը ունի և մեծապես նվիրական է մեզ համար:

Հայոց նախակերտ եկեղեցին է ս. Էջմիածինը: Միածին Որդվույն իջման վայրը ըլլալուն կպարտի իր անունը: Ս. Էջմիածինը մեզի համար միայն քարեղեն շենք մը չէ, այլ մեր կրոնական կեդրոնը, ուրկե բոց առավ մեր սուրբ հավատքը և ուրկե այդ բոցը ցրվեցավ այն ամեն կողմերը, ուր գնաց հայը, աշխարհի չորս ծագերուն վրա:

Այսօր ավելի քան երբեք հաստատուն է ու գեղատեսիլ և մագնիսի նման իրեն կը-բաշե աշխարհի ամեն կողմերը տարածված հայությունը, որ հոգիով զորացած կմեկնի հոնկե:

Այսօրվան հայությունը ավելի քան երբեք բախտավոր է, որ իր գլուխն ունի Վազգեն Ա. շինարար կաթողիկոսը, որուն ջանքերով հիմնովին նորոգված է ս. Էջմիածինը և վերածված այսօրվան շեն ու ծաղկյալ վիճակին, որ հիացում ու հարգանք կներշնչե բոլոր այցելուներուն:

Մեր Վեհափառ Հայրիկը առանձնապես թանկագին է պոլսահայերուն համար, որոնք 1961-ին Պոլսո մեջ վայելած են Իր ներկայությունը և պահած անջնջելի բաղդը հիշատակ մը, միշտ հուսալով որ դա՛ռձյալ կունենան այդպես երջանիկ պատեհություն մը այս անգամ ուրախ առիթով մը:

Կմաղթենք որ միշտ այսպես առիթ ունենանք տեսնելու և վայելելու մեր հայրենիքին և Մայր Աթոռին շարունակական վերելքը, որ լիովին կգոհացնե մեր ազգային հպարտությունը:

Եվ մանավանդ կմաղթենք, որ դեռ բազմաթիվ տարիներ մեր ազգին գլուխեն անապակաս ըլլա մեր Վեհափառ Հայրապետը, որ Իր բազմակողմանի հատկություններով անփոխարինելի է: Կմաղթենք որ լավագույն կերպով պսակվին իր փափաքներն ու հույսերը և ըլլա երջանիկ Հայրապետ մը»:

* * *

Հոկտեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Երուսաղեմի ամենապատիվ սրբազան հայրը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և ս. Էջմիածնից, մեկնում է իր Աթոռ:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, սրբազան պատրիարք հորը ճանապարհում են Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և Մայր Աթոռի այլ միաբաններ:

Սրբազան պատրիարք հորը ճանապարհում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Անդրանիկ Հասրաթյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան, տեղի է ունենում միաբանական հավաքույթ Վեհափառի գլխավորությամբ:

«Անգլիկան եկեղեցու ծագումը, զարգացումը և ներկա վիճակը» բանախոսությամբ հանդես է գալիս Ստեփանոս Չաքալյանը: Հավաքույթին ներկա էր նաև տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ է ժամանում Դամասկոսի հայոց առաջնորդ և Մայր Աթոռի միաբան տ. Ոսկան ծ. Վրդ. Գալբակյանը:

* * *

Հոկտեմբերի 15-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Մեծի Տանն Կիլիկիո միաբան տ. Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը, որ Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, ընդունվում է Ամենայն Հայոց Հայրապետի կողմից Վեհարանում:

* * *

Հոկտեմբերի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արարաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր» (Սաղմոս ՃԽ 1) բնաբանով:

* * *

Հոկտեմբերի 17-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով Անգլիա է մեկնում տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանը:

* * *

Հոկտեմբերի 18-ին, երեքշաբթի.—Այսօր Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատո և կարգի» հանձնաժողովի տնօրեն դոկտոր Լուկաս Ֆիշերը: Վեհափառ Հայրապետի հետ տեսակցություն ունենալուց հետո դոկտոր Ֆիշերը զրույց է ունենում նաև Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանի և քարտուղար Պարգև Շահբազյանի հետ, ապա այցելում Հայաստանի պատմական վանքեր ու վայրեր:

* * *

Հոկտեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից ու Մայր Աթոռից հրաժեշտ առնելով Ֆրանսիա է մեկնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան, հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի է ունենում դոկտ. Ֆիշերի հանդիպումը ճեմարանի ուսանողության հետ: Հարգելի հյուրը ուսանողներին հանգամանորեն պատմում է ԵՀԽ-ի տարբեր մարմինների, նրանց աշխատանքների և նպատակների մասին:

* * *

Հոկտեմբերի 20-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռից ու Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով Ժենևի իր պաշտոնատեղին է մեկնում դոկտոր Լուկաս Ֆիշերը:

*
* *

Հոկտեմբերի 22-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը:

*
* *

Հոկտեմբերի 23-ին, կիրակի.—Գիւտ Խաչ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և քարոզում «Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի» (Մատթ. ժ 38) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը հունահայ շուրջ քառասուն ուխտավորների և զրույց ունենում նրանց հետ: Զրույցի ընթացքում հունահայ ուխտավորներն իրենց ուրդիական սերն ու հավատարմության անկեղծ զգացումներն են հայտնում Նորին Սրբությանը:

Վեհափառ Հայրապետը սիրով հետաքրքրվում է հունահայ համայնքի կյանքով և ապա նրանց տալիս Իր հայրապետական օրհնությունը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և քարոզում «Թէ մերժեցայ յաչաց քոց. արդ իցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո» (Հովնան Բ 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՃԻՌ

Գերագույն հոգևոր խորհուրդը ս. թ.-ի սեպտեմբերի 28-ի իր նիստում արձանագրեց տ. Վահան եպիսկոպոս Տերյանի սեպտեմբեր 17 թվակիր կարգաթողությանն դիմումնագիրը և, նկատի ունենալով նաև այլ հանգամանքներ, խնդրեց Վեհափառ Հայրապետին ընթացք տալ նրա դիմումին:

Նորին Սրբությունը Իր 5 հոկտեմբեր թվակիր հայրապետական վճռով հաստատեց Գերագույն հոգևոր խորհրդի որոշումը և տ. Վահան եպիսկոպոսին հայտարարեց կարգալույծ հոգևորական, ընդմիշտ հեռացած Հայաստանյայց առաքելական եկեղեցուց, և նրան դասեց աշխարհականաց շարքը՝ նրա նախկին՝ Անդրանիկ Եզեկիելի Տերյան անունով: